**Արձանագրություն N 3**

**181ԴՊ-ԳՀԱՊՁԲ-18/1 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի նիստի**

*ք. Երևան, Ա.Բաբաջանյան փ. 4 շենք* — *25.06.2018թ*
*ժ . 14:30*

*Մասնակցում էին՝*
Հանձնաժողովի նախագահ՝ Դ. Մակիչյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Է. Մովսեսյանը, Ն. Ալեքսանյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Հ. Ղազարյանը

1. **Գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորումը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին**

**Դ. Մակիչյան**

Ընդունել ի գիտություն, որ.

- Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ «Կոմպմարկետ» ՍՊԸ -ին՝ 18.06.2018թ. ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը, առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը ներկայացնելու մասին, որոնց կողմից համապատասխան փաստաթղթերը ներկայացվել են հրավերով սահմանված ժամկետներում:
- 18.06.2018թ. ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում է ներկայացվել՝ «Կոմպմարկետ» ՍՊԸ -ի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը, ընդ որում ՝ եթե ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին չի տրամադրում հարցման մասին եզրակացություն, ապա մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող:
- ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից հարցման եզրակացությունը ներկայացվել է սահմանված ժամկետներում:
- Հանձնաժողովի քարտուղարի կոմից 22.06.2018թ. առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և Հայաստանի Հանրապետության ԿԱ ՊԵԿ-ից ստացված եզրակացությունը տրամադրվել է հանձնաժողովի անդամներին, որի գնահատման արդյունքները բերված են ստորև.

| **Մասնակցի հայտի գնահատման չափանիշները գնահատականը** | | | **Մասնակցի հայտի գնահատման արդյունքները** |
|---|---|---|---|
| | | | **Մասնակցի անվանումը** |
| | | | «Կոմպմարկետ» ՍՊԸ |
| 1 | «Մասնակցության իրավունքը» չափանիշը | Բավարար Անբավարար | Բավարար |
| 2 | «Մասնագիտական փորձառության» չափանիշը | Բավարար Անբավարար | Բավարար |
| 3 | «Ֆինանսական միջոցներ» չափանիշը | Բավարար Անբավարար | Բավարար |
| 4 | Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը | Բավարար Անբավարար | Բավարար |
| ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ | | Բավարար Անբավարար | Բավարար |

**Դ. Մակիչյան**

Հանձնաժողովը որոշեց.

**ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1**

Ընտրված մասնակից ճանաչել՝

՝1-4-րդ չափաբաժինների մասով «Կոմպմարկետ» ՍՊԸ –ին:

Ընտրված մասնակիցը ճանաչվել է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

**ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 2**

- Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի | | |
| Նախագահ՝ | [signature] | Դ. Մակիչյան |
| Անդամներ՝ | [signature] | Է. Մովսեսյան |
| | [signature] | Ն. Ալեքսանյան |
| Քարտուղար՝ | [signature] | Հ.Ղազարյան |